

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 131/10

Քաղ. Երևան

30 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Յ.Աբգարյան, Ա. Բաբայան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հուլիսի 30-ի նիստում (արձանագրություն N82/3) քննարկեց «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից 2010թ. հունիսի 17-ին ներկայացված «Բիլայն» (հայտի համար 20091562) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության 21.04.2010թ որոշման դեմ բողոքը:

Հիմք ընդունելով «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 57-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ նիստը ղեկավարեց Բողոքարկման խորհրդի նախագահի կողմից նշանակված Բողոքարկման խորհրդի անդամ Ա. Խաչիկյանը:

Մերժման համար հիմք են հանդիսացել որոշումը կայացնելու ժամանակ գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում նաեւ օրենք, ընդունված 20.03.2000թ համար ՀՕ-41, ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով՝ ընդունված 29.04.2010թ՝ թիվ ՀՕ-59-Ն, որը ուժի մեջ է մտել 01.07.2010թ) 12-րդ հոդվածի 1-ին մասի "բ" կետը և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 15-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաեւ 93.2-րդ, 98.1-9-րդ կետերը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ այլ անձանց ապրանքային նշաններին: «Բիլայն» բառային ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 9-րդ, 38-րդ, 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ «Բիլայն» (ռուս.) (Open joint-stock company

"Vimpel-Communications", 8th of March 10, building 14 RU-127083 Moscow (RU) (հիշագրային գրանցման թիվ 871892, 871893, 871895) ապրանքային նշաններին:

Բողոքարկողը գտնում է, որ որոշումը չի համապատասխանում օրենքի պահանջներին, և խախտվում են բողոքարկողի բացառիկ իրավունքները՝ իր մտավոր սեփականության օբյեկտներն օգտագործելու հետ կապված: Բողոքում, որպես նախապատմություն նշված է, որ բողոքարկողը 1996թ. ՅՅ տարածքում գրանցել է «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ ֆիրմային անվանումով ընկերությունը: Բողոքարկողի ֆիրմային անվանումը պարունակում է «ԲԻ ԼԱՅՆ» տարբերակող նշանակության անվանում ունեցող բառային բաղադրիչը: «Նշանների գրանցման նպատակներով ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ» Նիցցայի համաձայնագրով սահմանված դասակարգման համակարգի 9, 35, 37, 38, 41 և 42 ապրանքային դասերում բողոքարկողը 1997թ. և 2000թ. գրանցել է իր ֆիրմային անվանման հետ համընկնող հայերեն տառերով գրված «ԲԻ ԼԱՅՆ», կիրիլյան տառերով "БИ ЛАЙН" և լատինատառ "BI LINE" բառային և համակցված ապրանքային նշանները (գրանցման համարներ՝ 2429, 6323, 6324, 6325): Ապրանքային նշանների՝ տարբերակող նշանակության անվանում ունեցող բառային բաղադրիչը հնչում է որպես «բիլայն»:

Բողոքում նշված է, որ 2006թ-ին «Վիմպել-Կոմունիկացի» ԲԲԸ-ն դիմել էր Գործակալությանը "Би лайн" (միջազգային գրանցման համարը 702662) և "Билайн" (միջազգային գրանցման համարները 871890, 871891, 871894) նչպես նաև լատինատառ "Beeline" (միջազգային գրանցման համարը՝ 702663) և "Beeline" վ՛իջազգային գրանցման համարները՝ 871892, 871893, 871895) ապրանքային նշանները Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՃՄԴ 9, 16, 18, 25, 35, 36, 37, 38, 41 և 42 ապրանքային դասերում գրանցելու համար, սակայն դրանց գրանցումը 9, 35, 38, 41 և 42 ապրանքային դասերում Գործակալության կողմից մերժվել էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են Բողոքարկողի ՅՅ-ի տարածքում արդեն իսկ գրանցված եւ պահպանվող ֆիրմային անվանմանը եւ ապրանքային նշաններին: Բողոքարկողը նշել է նաեւ, որ 02.11.2007թ. «Վիմպել-Կոմունիկացի» ԲԲԸ-ի կողմից ՅՅ տնտեսական դատարան դիմում է ներկայացվել ընդդեմ Գործակալության, վերջինիս բողոքարկման խորհրդի 17.10.2007թ. որոշումներն անվավեր ճանաչելու և «Վիմպել-Կոմունիկացի» ԲԲԸ-ի՝ որպես «բիլայն» հնչող ապրանքային նշանների (բիլայն) գրանցման գործողությունը ՅՅ տարածքում տարածելու պահանջների վերաբերյալ: Նշված է նաեւ, որ ՅՅ տնտեսական դատարանը (նախագահող դատավոր՝ Ե.Խունդկարյան), քննելով վերոնշյալ քաղաքացիական գործը, չներգրավելով դրանում Բողոք բերողին, 07.12.2007թ. ակնհայտ անարդար և ապօրինի վճիռ է կայացրել (այսուհետ՝ Վճիռ), որով «Վիմպել-Կոմունիկացի» ԲԲԸ-ի դիմումն ամբողջությամբ բավարարել է, ինչի հետևանքով վերջինիս ապրանքային նշանների գրանցման գործողությունը տարածվել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկողը նշել է, որ դատարանի վճռի պատճառաբանական մասում նշվել է, որ «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ի կողմից հայտարարվող "Билайн" (IR 871892, IR 871893, IR 871895), «Beeline» (IR 871890, IR 871894) ապրանքային նշանները և «Բի Լայն» ՍՊԸ-ի անվանմամբ գրանցված «BI LINE», «Билайн», ԹԻ Լայն» (վկայական թիվ՝ 2429, 6323, 6324, 6325): ապրանքային նշանները չի կարելի որակել որպես նույնական կամ շփոթելու աստիճան նման:

Բողոքարկողը բողոքում նշել է, որ «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ի ապրանքային նշանները Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն են ստանում, քանի որ նման չեն իր ֆիրմային անվանմանը և ապրանքային նշաններին, իսկ վերջինիս ապրանքային նշանը, որը համահունչ է իր ֆիրմային անվանմանը, չի գրանցվում Գործակալության կողմից, քանի որ նման է «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ի հենց այն ապրանքային նշաններին, որոնք պաշտպանություն են ստացել ՀՀ տարածքում: Նշում է նաև, որ նման իրավիճակը հանգեցնում է օրենքի առջև կողմերի հավասարության բացակայության և խտրականության, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 և Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 14.*1-րդ հոդվածներին:

Բողոքարկողը բողոքում նշել է՝ «Եթե նույնիսկ համարենք, որ բողոք բերողի ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ի ապրանքային նշաններին, ապա ապրանքային նշանների գրանցումը չէր կարող մերժվել, քանի որ դրանք շփոթելու աստիճան նման են բողոք բերողի ավելի վաղ առաջնությամբ պահպանվող ֆիրմային անվանմանը և դրան համահունչ գրանցված ապրանքային նշաններին» և հղում է կատարել օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» ենթակետերին:

Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածին, համաձայն որի իրավաբանական անձն իրավունք ունի իր ֆիրմային անվանումն օգտագործել իրեն պատկանող ապրանքային նշանի վրա, բողոքարկողը նշել է, որ հայտ է ներկայացրել ՀՀ մտավոր սեփականության գործակալություն՝ խնդրելով իր անունով գրանցել ապրանքային նշան: Բողոքարկողի հայտը մերժվել է: Բողոքարկողը հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածին, ինչպես նաև «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին, նշել է նաև, որ որոշման մեջ արտահայտած այն հիմնավորումը, համաձայն որի ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 9-րդ, 38-րդ, 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշաններին սխալ է և չի բխում օրենքի պահանջից, քանի որ բողոքարկողի ապրանքային նշանը համահունչ է վերջինիս ավելի վաղ առաջնությամբ պահպանվող ֆիրմային անվանմանը և ապրանքային նշաններին: որը սահմանում է ֆիրմային անվանման նկատմամբ բացառիկ իրավունքը: Բողոքարկողը գտնում է, որ գործակալությունը մերժելով իր հայտը, զրկել է իրեն ՀՀ օրենսգրքի 1168-րդ հոդվածով

Նախատեսված իր ֆիրմային անվանումն իրեն պատկանող ապրանքային նշանի վրա օգտագործելու իրավունքից:

Բողոքարկողը բողոքում հղում կատարելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին, այն է՝ «վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջացները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր», նշել է, որ «գործակալության կողմից իրականացված վարչարարությունը չի կարող համարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին ուղղված, պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոց, քանի որ վերջինս գրկել է հայցվորին իր մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունքից»:

Բողոքարկողը իր պահանջը ամփոփել է հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 14.*1-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, «Ապրանքային և սպասարկման նշանների ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի 68-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները եւ խնդրել է բողոքն ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ԱԾՄԴ 38-րդ դասում «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի անունով գրանցել «Բիլայն» (հայտի համարը՝ 20091562) ապրանքային նշանը:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված բողոքը և նյութերը, ինչպես նաեւ հաշվի առնելով նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները բողոքարկման խորհուրդը պարզեց՝

«Նշանների միջազգային գրանցման մասին» Մադրիդյան Համաձայնագրի» ուժով և Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճռով (քաղաքացիական գործ թիվ S-2989/2007) Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է ստացել «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ին պատկանող միջազգային գրանցման թիվ 871895 «Билайн» բառային (ռուսերեն լեզվով), 871893 «Билайн» համակցված (բառային մասը ռուսերեն լեզվով), 871892 «Билайн» համակցված (բառային մասը ռուսերեն լեզվով) ապրանքային նշանները (այսուհետ նաեւ հակադրված ապրանքային նշաններ) «Նշանների գրանցման նպատակով ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ Նիցայի Համաձայնագրին» համաձայն 9, 16, 18, 25, 35, 36, 37, 38, 41, 42-րդ դասերի նկատմամբ:

02.12.2009թ.-ին գործակալություն «Բի լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Բիլայն» (հայտի համար թիվ 20091562) բառային ապրանքային նշանի հայտ: Հայտի ներկայացման և

փորձաքննության ու որոշման կայացման ժամանակ գործող «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում նաեւ օրենք, ընդունված 20.03.2000թ համար ՀՕ-41, ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով՝ ընդունված 29.04.2010թ՝ թիվ ՀՕ-59-Ն, որը ուժի մեջ է մտել 01.07.2010թ) սահմանված կարգով փորձաքննության արդյունքում 21.04.2010թ ընդունվել է նշված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում: Որոշմաների հիմքում դրվել է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը, համաձայն որի՝ «1. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝ բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող՝ ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին.», «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» (հաստատված ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 12.04.2005թ թիվ N 85-Ն հրամանով, այսուհետ տեքստում նաեւ կարգ) 15-րդ կետի 2-րդ ենթակետը, 93-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաեւ ավելի վաղ առաջնությամբ հակադրված ապրանքային նշանների առկայությունը, որոնք համաձայն կարգի 97, 98-րդ կետերի 1-9-րդ ենթակետերի շփոթելու աստիճանի նման են հայտարկված ապրանքային նշանին: Հայտարկված ապրանքային նշանը գրանցման է ներկայացվել ԱՃՄԴ 38-րդ դասի՝ հեռահաղորդակցություն ծառայությունների համար, այն դեպքում երբ նույն դասի նույն ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ իրավական պահպանություն տրամադրված է հակադրված ապրանքային նշաններին: Այսինքն վիճարկվող որոշումը կայացվել է օրենքին համապատասխան:

Ինչ վերաբերում է բողոքարկողի կողմից նշված «Վիմպել Կոմունիկացի» ԲԲԸ ապրանքային նշանների իրավական պահպանության տրամադրումը մերժելու մասին որոշումներին, հետագայում նշված որոշումները դատարանում վիճարկելու գործընթացին եւ կայացված վճռին, ապա փորձաքննության արդյունքում գործակալության ընդունած վիճարկվող որոշման հետ այն որեւէ կապ չունի, եւ որեւէ իրավական նորմով այն հիմք չի կարող հանդիսանալ հայտարկված ապրանքային նշանները գրանցելու համար, որը ըստ բողոքարկողի պետք է աներ գործակալությունը հաշվի առնելով նշված վճիռը: Այսինքն դատարանի նշված վճիռը հայտարկված ապրանքային նշանների գրանցման կամ գրանցման մերժման հիմք չի կարող ընդունվել, քանի որ դա որեւէ օրենքով նախատեսված չէ: Հետևաբար բողոքարկողի հղումը վերը նշված դատական ակտին անհիմն է: Բացի այդ հայցվորի կողմից նշված դատական գործընթացում գործակալությունը եւս պնդել է, որ հայտարկված եւ հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճանի նման են:

Անհիմն է նաև բողոքարկողի հղումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, որը սահմանում է՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, Էթնիկական կամ սոցիալական

ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է» և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի» 14.1-րդ հոդվածին, որը սահմանում է՝ «Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից ու ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»: Նախ, նշված նորմերը վերաբերում է մարդուն, այլ ոչ թե իրավաբանական անձին, հետևաբար այն տվյալ դեպքում կիրառելի չէ, նույնիսկ եթե կիրառելի լինի, ապա հայցվորը չի հիմնավորել թե վիճարկվող որոշումներով գործակալության կողմից ինչպես է դրսևորվել խտրականություն և որտեղ է նշված, որ որոշումները պարունակում են կամ ընդունվել են՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում կամ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի» 14.1-րդ հոդվածում նշված հանգամանքներից: Վիճարկվող որոշումները ընդունվել են օրենքի համաձայն, որի վերաբերյալ հիմնավորումները արդեն ներկայացվել են, հետևաբար օրենքի իմպերատիվ պահանջները կատարելը որևէ կերպ չի կարող խտրականության դրսևորում հանդիսանալ, առավել ևս, որ գործակալությունը նախկինում ևս նմանատիպ հարցի վերաբերյալ հայտնել է նույն դիրքորոշումը և կայացրել է նմանատիպ որոշումներ այլ անձի հայտարկած ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ: Բացի դա, բողոքարկողը չի նշել, թե կոնվենցիայի որ իրավունքից կամ ազատությունից օգտվելու ապահովմանն է վերաբերում ըստ բողոքարկողի դրսևորված խտրականությունը:

Բողոքարկողը բողոքում նշել է. «Եթե նույնիսկ համարենք, որ բողոքարկողի ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են «Վիմպել-Կոմմունիկացի» ԲԲԸ-ի ապրանքային նշաններին, ապա ապրանքային նշանների գրանցումը չէր կարող մերժվել, քանի որ դրանք շփոթելու աստիճան նման են հայցվորի ավելի վաղ առաջնությամբ պահպանվող ֆիրմային անվանմանը և դրան համահունչ գրանցված ապրանքային նշաններին» և հղում է կատարել օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» ենթակետերին: Բողոքարկողի նշված պնդումն անհիմն է և չունի որևէ իրավական հիմնավորում ստորեւ նշված պատճառներով:

Նախ, օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է հայտը լիազոր մարմին ներկայացնելու տարով, ամսով, ամսաթվով (այսուհետ՝ թվական)», այսինքն կոնկրետ ապրանքային նշանի հայտը գործակալություն ներկայացնելու թվականն է հանդիսանում տվյալ ապրանքային նշանի առաջնությունը, իսկ տվյալ

դեպքում «Բի լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Բիլայն» (հայտի համար թիվ 20091562) բառային ապրանքային նշանի առաջնությունը հանդիսանում է 02.12.2009թ.-ը, քանի որ նշված ապրանքային նշանների հայտը գործակալություն ներկայացվել է 02.12.2009թ.-ին, և մեկ այլ շփոթելու աստիճան նման ավելի վաղ իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի առաջնությունը չի կարող հանդիսանալ հետագայում հայտարկված ապրանքային նշանի առաջնության թվական: Ինչ վերաբերում է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» ենթակետերին, ապա այդ ենթակետերը վերաբերում են ապրանքային նշանի գրանցումը մերժելու հիմքերին, օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը սահմանում է, որ «Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող՝ ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին», որը և դրվել է վիճարկվող որոշման հիմքում, այսինքն օրենքը հստակ սահմանում է, որ եթե նույն կամ նույնատիպ ապրանքների և ծառայությունների համար արդեն առկա է շփոթելու աստիճանի նման ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշան, ապա հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, և գործակալությունը կատարել է օրենքի պահանջը, իսկ այն որ առկա է նաև հայցվորին պատկանող շփոթելու աստիճան նման ապրանքային նշան և ֆիրմային անվանում, ապա օրենքը որևէ նորմով չի սահմանում, որ այդ դեպքում պետք է իրականացվի գրանցում խախտելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը:

Բողոքարկողը հղում կատարելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածին և «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին նշել է, որ «մերժելով ապրանքային նշանների գրանցումը զրկել է բողոքարկողին իր ֆիրմային անվանումը իրեն պատկանող ապրանքային նշանի վրա օգտագործելու իրավունքից:» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածը սահմանում է՝ «Իրավաբանական անձն իրավունք ունի իր ֆիրմային անվանումը օգտագործել իրեն պատկանող ապրանքային նշանի վրա», այստեղ խոսքը գնում է իրեն պատկանող ապրանքային նշանի մասին, որը ենթադրում է իր անվամբ իրավական պահպանություն կամ գրանցում ստացած ապրանքային նշանի առկայություն, որի վրա նա իրավունք կունենա օգտագործել իր ֆիրմային անվանումը, տվյալ դեպքում վիճարկվող ապրանքային նշանը չի գրանցվել, այսինքն չի պատկանում հայցվորին, օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից, օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ապրանքային նշանի իրավատերն ունի այն տիրապետելու, տնօրինելու, օգտագործելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք, այսինքն ապրանքային նշանը պետք է իրավական պահպանություն ստանա, որպեսզի համարվի իր ապրանքային նշանը: Բացի դրանից, 1168-րդ հոդվածը չի ենթադրում, որ սուբյեկտն իր ֆիրմային

անվանումն իր ապրանքային նշանի վրա կարող է օգտագործել նաեւ այն դեպքում, երբ դրանով խախտվում են այլ անձանց իրավունքները՝ մասնավորապես նման օգտագործումը որոշակի ապրանքների համար կարող է այլ անձանց իրավունքների խախտման չհանգեցնել, իսկ այլ ապրանքների կամ ծառայությունների համար՝ կարող է հանգեցնել: Իսկ «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը վերաբերում է ֆիրմային անվանումների նկատմամբ բացառիկ իրավունքին և տվյալ դեպքում վերաբերելի եւ կիրառելի չէ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշմանը: Հետևաբար բողոքարկողի կողմից նշված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածին և «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին վիճարկվող որոշմանը վերաբերելի չեն, առկա չեն նշված հոդվածների խախտումներ, ուստի նշված հիմքերով պահանջը ևս անհիմն է:

Բողոքարկողը բողոքում հղում կատարելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին այն է՝ «վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր», նշել է, որ «գործակալության կողմից իրականացված վարչարարությունը չի կարող համարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին ուղղված, պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոց, քանի որ վերջինս գրկել է բողոքարկողին իր մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունքից»: Նախ արդեն նշել ենք և հիմնավորել ենք, որ հայցվորի մտավոր սեփականության օգտագործման իրավունքից գրկում վիճարկվող որոշումամբ տեղի չի ունեցել և բողոքարկողի այս պնդումը անհիմն է: Բացի այդ, վիճարկվող ապրանքային նշանի նկատմամբ որևէ ակտով բողոքարկողին վերապահված իրավունք չկա, հետևապես այդ իրավունքից գրկելու մասին խոսք լինել չի կարող: Երկրորդ բողոքարկողը Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակը խառնել է այդ նպատակին հասնելու միջոցի հետ, օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածներով սահմանված փորձաքննությունը դա օրենքով հետապնդվող նպատակն է, օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով սահմանված նորմը՝ այն է.«Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող՝ ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին», դա օրենքով հետապնդվող նպատակն է, ուստի, սույն նորմը կիրառելի է միջոցի նկատմամբ այլ ոչ թե օրենքով հետապնդվող նպատակի նկատմամբ, հետևաբար սույն նորմը կիրառելի չէ և սույն հիմքերով պահանջը ևս անհիմն է:

Ելնելով վերոգրյալից վիճարկվող որոշումամբ չի խախտվել որևէ օրենքի պահանջները, այդ թվում առկա չէ նաև «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պայմանները, վիճարկվող որոշումը իրավաչափ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման» կարգի 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի «Բիլայն» բառային ապրանքային նշանի փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան